

որոց զին է զրեւ եւ պօման թէ չուտով զան
 եւ զնեն՝ ազատին, ապա թէ ոչ՝ ձգէ զնոսա
 ի զատրղան կամ տաշկէմին եւ զխառնիճա-
 25 զանճն երկաթի շղթայիւք տայ ի վործ եւ աշ-
 խատանա, քար հատանել կամ հող կրել, որ-
 պէս Ստամպօլ վայզաննին: Եւ շինած էր մեծ
 գետնափորք եւ մաղարայք լայն եւ արձակ.
 զիշերն անգ արգելուին եւ ցորեկին բանեց-
 30 նէին: Եւ իւր քաղաքին սարայք, եկեղեցիք
 եւ պարիսպք եւ այլ յորով շինք նոքօք շինին.
 եւ սոճն տասն հոգոյ տասնապետ կայ. զի
 յորժամ հանեն խորափխտէն եւ տանին ի բան,
 երթալն մեծ ձայն, հնչումն եւ շնդումն լինի
 35 շղթայից եւ երկաթից, մինչ մարդիկ զունկն
 խնուն: Եւ այլ իշխանք, պարսնայք՝ յորժամ
 կամին եարու ինչ շինել կամ բերթ կամ պա-
 րիսպ, ի սմանէ խնդրեն որչափ կամին՝ Ռ,
 ԲՌ կամ այլ աւելի. եւ սա առաքէ ոմանց
 40 զրամով, այլոց վասն պարգեւաց: Են եւ այլ
 տուքայք, որ եւ նոքա ունին յորով գերիք-
 սպա սորա նման չունին. վասն այն կրան
 Տուքա կոչի, որ է մեծ դուքս:

ՆԱԻԱՏՈՐՄԻՎ ԴՔՍԻՆ ՄԱԼԹԱՅԻ

Եւ Մալթայու տուքան ալ շատ կտրուկ է
 45 եւ պատերազմող եւ հզօր. եւ նա զնայ մերձ
 Ստամպօլայ կղզիքն, բազում օճիր եւ ֆլասս
 զործելով քաղաքաց, գիւղից եւ կէմոց: Եւ
 այն տարին որ մեք անդ (էաք), Մալթայու

25 տա: — 29 բանեցնէ: — 35 մարդիք: —
 41 տուքաք: — 46 յօճիր: